

### ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

#### ԲԱՐՁՐ ԳՕՄԻՍԷՐԸ Ի Ս. ՅԱԿՈԲ

16 Յունուար 1929, Գշ., Պաղեստինի նորընտիր Բարձր Գոմիսները, ընկերակցութեամբ իր Տրկնոջ և այլ բարձրաստիճան հիւրերու, իր առաջին այցելութեամբ պատուեց Ս. Յակոբեանց վանքը: Ահագ զանէն ընդունուեցաւ Թարգման Տ. Տրդատ վարդապետի, Դիւանապետ Տիար Կարապետ Նուրեանի և Միտրան Հայրերու կողմէ. և պաշտօն շուքով առաջնորդուեցաւ ուղղակի Մայր Տաճար, ուր ընդունուեցաւ Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ: Տաճարին զանազան մասերը անսնելէ և հնութիւնները հետաքրքրութեամբ դիտելէ յետոյ, Նորին վսեմութիւնն ու հետեօրդները միևնոյն հանդիսութեամբ առաջնորդուեցան Պատրիարքարան: Դահլիճին դրան առջև ընդունուեցան Ս. Պատրիարք Հօր և Եպիսկոպոսոսց կողմէն: Այս առթիւ թէյառեղանով մեծարուեցան Ն. վսեմութիւնն ու հետեօրդները: Ս. Պատրիարք Հօր աշխատութեան բազմամտեան սենեակը դիտելէ և հիւրերու յատուկ սոմարին մէջ իրենց անունները արձանագրելէ ետքը, երկոյնի ժամը 4 30ին մեկնեցան. յայտնելով իրենց հիացումն ու գնահատանքը Հայոց Պատրիարքարանին համար:

(«Սիոն», 1929, Գ. Տարի, Փետր. - Մարտ, Թիւ 2 - 3, էջ 94:)

#### ԴՈՒՐԵԱՆ ՅՈՒՆԵԼԵԱՆ

Դուրեան Յօրեւեանի կեդրոնական Յանձնաժողովը որոշեց Դուրեան Մասեմադարանին տեղը, ժառանգ. վարժարանի կամ Չամ-Թաղի և Տպարանի միջև, 18 մէթր ճակատով, դէպի Արևելք, և 25 մէթր խորքով, որուն յատակագիծը կը պատրաստուի ճարտարապետին կողմէ:

Դուրեան Մասեմադարանի մէջ պիտի հաւաքուին բոլոր Զեառդիր և Տպագիր գործերը, թերթերն ու հանդէսները: Մասեմադարանը պիտի ունենայ նաև Թանգարանի (museum) բաժին մը, ուր պիտի դասաւորուին ննագրտական առարկաներ:

Ըստ որոշման Յօրեւեանական կեդր. Յանձնաժողովին, Դուրեան Մասեմադարանի շինութեան հազար Անգլիական սակի նուիրողներուն յիշատակը մշանջեանուօրեալ համար թէ՛ մարմարեայ առանձին արձանագրութիւն պիտի դրուի Մասեմադարանին ներքեւ և թէ՛ նուիրատուին իւզաներկ պատկերը: 500 սակի նուիրողներուն միայն իւզաներկ պատկերը, իսկ 500 սակիէ՛ն նուազ նուիրողներուն անուանց ցանկը պիտի քանդակուի քարի վրայ:

\* \* \*

Երուսաղէմի Ֆրանչիսկեան Միտրանութեան Մեծուար (Կիւսթոս) Հայր Օքիլիօ Մարօթթա Ամեն. Ս. Պատրիարք Հօր նուիրոց Golubovichի Biblioteka bibliografica della Terra Santaի 10 հատոր գործը, յատկապէս կազմուած, ինքնագիր ձօնով, Ն. Ամեն. Քահանայութեան Յիսնամեայ Յօրեւեանին առթիւ:

Ուրախ ենք որ Սիոնի կողմէն ուղղուած կոչը, Ս. Յակոբի Մասեմադարանը ճոխացնելու մասին, ապարդիւն չմնաց:

Այս անգամ կ'արձանագրենք հասարակութեանը գործերու երկու մեծ նուիրատուութիւններ. մին՝ Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցւոյն Church Periodical Clubի (Նիւ Եօրք) վարիչ Miss Mary Thomasի կողմէն՝ Նախանիկիական և Յեսնիկիական Հայրերու գործերուն թարգմանութիւնը՝ 39 հատոր. իսկ միւսը՝ Նիւ Եօրքի Miss Horace Blockի կողմէն՝ Արդի Անկլիկան Ասուածաբանութեան 39 հատորները:

(«Սիոն», 1929, Գ. Տարի, Ապրիլ, Թիւ 4, էջ 127:)